ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՁԵՎՈՎ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ N ՍՊԲԵ79_2022

ք. Երևան

«20» ապրիլի 2022թ.

Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը (այսուհետ՝ պետական մարմին), ի դեմս գլխավոր քարտուղար Գագիկ Սաֆարյանի, որը գործում է պետական մարմնի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և «Ֆակտորի Փրոդաքշն» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը (այսուհետ՝ կազմակերպություն), ի դեմս տնօրեն Ռուդիկ Տեր-Գալստյանի, որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից (այսուհետ՝ միասին կողմեր), հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2022 թվականի ապրիլի 15-ի N 523-Ն որոշումը (այսուհետ՝ որոշում)՝ «1041. Մեծ նվաճումների սպորտ» ծրագրի «11034. 2022 թ. Երևանում կայանալիք բռնցքամարտի Եվրոպայի առաջնության անցկացման ապահովում» միջոցառման (այսուհետ՝ ծրագիր) իրականացման նպատակով կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ պայմանագիր)՝ հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան

1.1. Սույն պայմանագրով պետական մարմինը պարտավորվում է ծրագրի իրականացման նպատակով կազմակերպությանը հատկացնել որոշմամբ նախատեսված՝ 750 192 000 (յոթ հարյուր հիսուն միլիոն հարյուր իններորդ հազար) ՀՀ դրամ գումար՝ ծրագրով և (կամ) սույն պայմանագրի N2 հավելվածով սահմանված նախահաշվին և N3 հավելվածով սահմանված ժամանակացույցին համապատասխան, իսկ կազմակերպությունը պարտավորվում է ծրագիրն իրականացնել որոշմամբ և սույն պայմանագրով սահմանված կարգով:

1.2. Ծրագրով նախատեսված՝ կազմակերպության կողմից իրականացվելիք միջոցառումը (այսուհետ՝ միջոցառում) ներկայացված է սույն պայմանագրի N1 հավելվածում:

2. Կողմերի իրավունքները և պարտավորությունները

2.1. Պետական մարմինն իրավունք ունի՝

2.1.1. ցանկացած ժամանակ (այդ թվում՝ լիազոր մարմնի միջոցով) ստուգելու կազմակերպության կողմից իրականացվող միջոցառման ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

2.1.2. որոշմամբ սահմանված պահանջներին չհամապատասխանելու դեպքում չընդունելու իրականացված միջոցառման հաշվետվությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ, և կազմակերպությունից պահանջելու վճարել սույն պայմանագրի 5.1-ին կետով նախատեսված տուգանքը.

2.1.3. առանց իրականացված միջոցառման արդյունքների դիմաց գումար տրամադրելու՝ միակողմանի լուծելու սույն պայմանագիրը և պահանջելու հատուցել պատճառված վնասները, եթե՝

ա. կազմակերպությունը ժամանակին չի սկսում ծրագրի իրականացումը, կամ ծրագրի իրականացման ժամանակ ակնհայտ է դառնում, որ այն պատշաճ չի իրականացվելու,

բ. կազմակերպությունը երկու և ավելի անգամ խախտել է ծրագրով նախատեսված միջոցառման իրականացման ժամկետները (միջոցառման իրականացման ժամկետներ նախատեսված լինելու դեպքում),

գ. իրականացված միջոցառումը չի համապատասխանում ծրագրով սահմանված պահանջներին.

2.1.4. սույն պայմանագիրն օրենքով կամ սույն պայմանագրով նախատեսված հիմքերով լուծելու դեպքում պահանջելու իրեն հանձնել անավարտ միջոցառման արդյունքները:

2.2. Կազմակերպությունն իրավունք ունի՝

2.2.1. իրականացված միջոցառման արդյունքը պետական մարմնի կողմից ընդունվելու դեպքում պահանջելու վճարել իրեն հասանելիք գումարը.

2.2.2. պետական մարմնի կողմից գումարները չվճարվելու դեպքում միակողմանի լուծելու սույն պայմանագիրը և պահանջելու հատուցել իրեն պատճառված վնասները:

2.3. Պետական մարմինը պարտավոր է՝

2.3.1. ծրագրով նախատեսված դեպքերում աջակցել կազմակերպությանը.

2.3.2. կատարել ծրագրի իրականացման մոնիթորինգ՝ անհրաժեշտության դեպքում համագործակցելով այլ պետական կառավարման մարմինների հետ.

2.3.3. իրականացնել ծրագրով նախատեսված այլ աշխատանքներ.

2.3.4. իրականացված միջոցառման մասին ներկայացված բովանդակային և ֆինանսական ամփոփ հաշվետվությունների վերաբերյալ համապատասխան որոշում ընդունել այն ստանալու օրվանից մինչև քսան աշխատանքային օրվա ընթացքում:

2.4. Կազմակերպությունը պարտավոր է՝

2.4.1. իրականացնել ծրագրի շրջանակներում պետական մարմնի կողմից տրամադրված գումարների հաշվապահական հաշվառման վարում՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով.

2.4.2. պայմանագրով նախատեսված ֆինանսական միջոցներն օգտագործել ծրագրով և (կամ) սույն պայմանագրով սահմանված նպատակներով ու չափաքանակներով՝ համաձայն սույն պայմանագրի N 2 հավելվածի.

2.4.3. որոշման 3-րդ կետի համաձայն՝ սույն որոշմամբ հատկացված գումարներով ձեռք բերված գույքը միջոցառման ավարտից հետո հանձնել Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությանը:

2.4.4. կատարել պետական մարմնի կողմից բացահայտված թերությունների վերացման նպատակով տրված ցուցումները.

2.4.5. սույն պայմանագրով սահմանված կարգով միջոցառման ավարտից հետո քսան աշխատանքային օրվա ընթացքում պետական մարմին ներկայացնել միջոցառման իրականացման մասին բովանդակային և ֆինանսական ամփոփ հաշվետվություններ.

2.4.6. սույն պայմանագրի գործողության ընթացքում ապահովել ծրագրի իրականացմանը վերաբերող փաստաթղթերին ծանոթանալու պետական մարմնի հնարավորությունը՝ վերջինիս կողմից գրավոր պահանջ ստանալու օրվանից 5 աշխատանքային օրվա ընթացքում.

2.4.7. պետական մարմնի կողմից միջոցառման իրականացման մասին ֆինանսական ամփոփ հաշվետվությունը չընդունվելու դեպքում կազմակերպությունը պարտավորվում է անվճար՝ պետական մարմնի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել արձանագրված անհամապատասխանությունները.

2.4.8. **ծրագրի իրականացման համար անհրաժեշտ ապրանքները, աշխատանքները և ծառայությունները ձեռք բերել «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով՝ պետության կարիքների համար կատարվող գնումների կանոններին և որոշման 2-րդ կետի համաձայն: Ընդ որում որոշմամբ նախատեսված հատկացումների հաշվին գնումների գործընթացը Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 23-րդ կետի 5-րդ ենթակետի «բ» պարբերության հիման վրա իրականացնելու դեպքում չկիրառելով կարգի 21-րդ կետի 1-ին ենթակետի «դ» պարբերության և 71-րդ կետի 1-ին ենթակետի պահանջները.**

2.4.9. ավարտված միջոցառման փաստացի կատարված ծախսերի ամփոփ հաշվետվությունը 2.4.5 կետով սահմանված կարգով ներկայացնել պետական մարմին՝ նկատի ունենալով, որ փաստացի ծախսերը հիմնավորող հաշվապահական և այլ փաստաթղթերը գտնվում են Կազմակերպությունում և վերջինս պատասխանատվություն է կրում դրանց իսկության համար:

2.4.10 չծախսված գումարի վերջնական, տարեվերջյան մնացորդը վերադարձնել Հայաստանի Հանրապետության պետական բյուջե ոչ ուշ, քան մինչև 2022 թվականի դեկտեմբերի 25-ը:

3. Մոնիթորինգը

3.1. Պետական մարմինը ծրագրի իրականացման նախնական, ընթացիկ և վերջնական արդյունքների համապատասխանության գնահատման նպատակով իրականացնում է մոնիթորինգ:

3.2. Մոնիթորինգն իրականացվում է պետական մարմնի և (կամ) նրա կողմից լիազորված անձի կողմից:

3.3. Մոնիթորինգի իրականացման ընթացքում բացահայտված թերացումների ու բացթողումների շտկման նպատակով կազմակերպությանը տրվում են ցուցումներ, և կատարվում են առաջարկություններ:

3.4. Պետական մարմինը ցանկացած ժամանակ կարող է ծրագրի շրջանակներում իրականացնել մոնիթորինգ՝ ուսումնասիրելով ծրագրին առնչվող ցանկացած փաստաթղթեր և նյութեր:

3.5. Մոնիթորինգի իրականացման ընթացքում կազմակերպությունից կարող են պահանջվել գրավոր ու բանավոր պարզաբանումներ և բացատրություններ:

4. Վճարման կարգը և ժամկետները

4.1 Պետական մարմինը վճարումն իրականացնում է համաձայն որոշման, պայմանգրի 1.1-ին կետով նախատեսված գումարի և N3 հավելվածի: Ընդ որում սահմանված գումարի 40 %-ը Կազմակերպությանը հատկացվում է Պայմանագրի կնքումից հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում, առավելագույնը 40 %-ը՝ մինչև մայիսի 15-ը՝ համաձայն կազմակերպության կողմից ներկայացված ֆինանսավորման հայտի, որն իր մեջ պետք է ներառի դրույթներ արդեն իսկ կատարված աշխատանքների (դրանց դիմաց իրականացված վճարումների) և նախատեսվող աշխատանքների (դրանց դիմաց նախատեսվող վճարումներ), իսկ մնացած մասը պետական մարմնի կողմից բովանդակային և ֆինանսական ամփոփ հաշվետվությունների ընդունումից հետո:

4.2. Սույն պայմանագրի 2.3.4 կետում նշված ամփոփ հաշվետվությունները Պետական Մարմնի կողմից ընդունվելու դեպքում Կողմերի միջև ստորագրվում է հանձնման-ընդունման արձանագրություններ և Կազմակերպությունը ներկայացնում է համապատասխան հարկային հաշիվներ:

4.2 Պետական մարմինը վճարումն իրականացնում է անկանխիկ՝ դրամական միջոցները կազմակերպության հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով:

4.3. Համաձայն «ՀՀ 2022 թվականի պետական բյուջեի մասին» օրենքի 7-րդ հոդվածի 22-րդ կետի՝ հաշվարկված ԱԱՀ-ի գծով լրացուցիչ հատկացումները չեն կարող ուղղվել այլ նպատակների և չօգտագործված գումարները 2022 թվականի ընթացքում ենթակա են վերադարձման ՀՀ պետական բյուջե:

5. Կողմերի պատասխանատվությունը

5.1. Սույն պայմանագրով նախատեսված հաշվետվության ներկայացման համար սահմանված ժամկետները չպահպանելու դեպքում Կազմակերպությունը Պետական մարմնին վճարում է տույժ՝ չներկայացված հաշվետվության համար պետական մարմնի կողմից հաստատված նախահաշվի 0.05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով՝ ուշացված յուրաքանչյուր աշխատանքային օրվա համար, իսկ պայմանագրով և ծրագրով նախատեսված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքում կազմակերպությունը, եթե Պետական մարմնին չի ներկայացրել դրա վերաբերյալ հիմնավոր բացատրություն, վճարում է տուգանք չկատարած աշխատանքի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

5.2.Տույժի և տուգանքի վճարումը կազմակերպությանը չի ազատում իր պարտավորությունները կատարելու և խախտումները վերացնելու պարտականությունից: Պետական մարմինը սույն կետով նախատեսված գումարները հաշվարկում և հաշվանցում է կազմակերպությանը վճարվելիք գումարներից կամ պահանջում է հետ վճարել:

6. Պայմանագրի գործողության ժամկետը

6.1. Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև պարտավորությունների ամբողջ ծավալով կատարումը:

7. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

7.1. Պայմանագրով նախատեսված պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներն են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարումը, քաղաքական

հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 ամսվանից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծելու պայմանագիրը՝ դրա մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. Եզրափակիչ դրույթներ

8.1. Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից հաստատված ծրագիրը հանդիսանում է սույն պայմանագրի անբաժանելի մասը:

8.2. Պայմանագրում կատարվող փոփոխությունները կամ լրացումներն իրավաբանական ուժ ունեն, եթե կազմված են գրավոր և ստորագրված են կողմերի կողմից:

8.3. Պայմանագիրը կնքվում է պայմանագրի կողմերի թվին համապատասխան թվով օրինակով, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

8.4. Պայմանագրով նախատեսված պարտավորությունների չկատարման հետ կապված, ինչպես նաև սույն պայմանագրով չնախատեսված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

9. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ	ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ
ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն	«Ֆակտորի Փրոդաքշն» ՍՊԸ
Հասցե՝ ք. Երևան, Կառավարական 2-րդ շենք	ք. Երևան, Սասնա Ծռեր 2/198
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն	Բանկ՝ « Էվոկաբանկ» ՓԲԸ
Հ/Հ 900011039865	Հ/Հ՝ 1660004718200100
ՀՎՀՀ՝ 02698732	ՀՎՀՀ՝ 00167818
Գլխավոր քարտուղար՝	Էլ. փոստ՝ rudik.tergalstyan@factory.am
	Տնօրեն ՝
Գ. Սաֆարյան	Ռ. Տեր-Գալստյան
Կ. Տ.	Կ. Տ.

Հավելված N1
2022 թ. ապրիլի 20-ին
կնքված N ՍՊԲԵ79_2022 պայմանագրի

Մ Ի Ջ Ո Ց Ա Ռ Ո Ւ Մ Ն Ե Ր

	Իրականացվելիք միջոցառման անվանումը	Համառոտ բովանդակությունը	Կատարման ենթակա գործառույթների նկարագիրը	Ակնկալվող արդյունքները և դրանց գնահատման չափանիշները	Վերջնաժամկետը	Պահանջվող գումարը (հազար դրամ)
1.	2022 թ. Երևանում կայանալիք բռնցքամարտի Եվրոպայի առաջնության անցկացման ապահովում»	Բռնցքամարտի Եվրոպայի առաջնության անցկացման ապահովում	Բռնցքամարտի Եվրոպայի առաջնության անցկացման ապահովում	**Արդյունքները** բռնցքամարտի Եվրոպայի առաջնության անցկացումը կնպաստի բռնցքամարտ մարզաձևի զարգացմանը, մասսայականցմանը, արդյունքների բարձրացմանը և մրցանակային տեղերի գրավմանը: **Գնահատման չափանիշները** Բռնցքամարտի Եվրոպայի առաջնության անցկացում և արդյունքների գնահատում Հոլովակների, գրաֆիկական բյումների և այլ տեսանյութերի թիվ՝ 5 հատ, տեսաֆիլմի թիվ՝ 1 հատ, առաջնության կազմակերպման և անցակացման վերաբերյալ հանրության իրազեկում – 100 %, մասնակիցների թիվ՝ 350, երկրների թիվ՝ 35	Միջոցառման ժամկետը՝ 2022 թ. մայիսի 21-31-ը, պայմանագրի գործողության ժամկետը՝ 2022 թ. դեկտեմբերի 30-ը	750.192.0 դրամ

ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն
Հասցե՝ ք. Երևան, Կառավարական 2-րդ շենք
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011039865
ՀՎՀՀ՝ 02698732
Գլխավոր քարտուղար՝

Գ. Սաֆարյան

Կ. Տ.

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

«Ֆակտորի Փրոդաքշն» ՍՊԸ
ք. Երևան, Սասնա Ծռեր 2/198
Բանկ՝ « Էվոկաբանկ» ՓԲԸ
Հ/Հ՝ 1660004718200100
ՀՎՀՀ՝ 00167818
Էլ. փոստ՝ rudik.tergalstyan@factory.am

Տնօրեն՝

Ռ. Տեր-Գալստյան

Կ. Տ.

Հավելված N2
2022 թ. ապրիլի 20-ին
կնքված N ՍՊԲԵ79_2022 պայմանագրի

ՆԱԽԱՀԱՇԻՎ

2022թ. մայիսին Երևանում անցկացվող բռնցքամարտի Եվրոպայի առաջնության խաղերի կազմակերպչական ծախսերի

N	Անվանումը	Չափման միավորը	Քանակը	Միավորի գինը, ներառյալ հարկերը, ՀՀ դրամ	Ընդամենը գումարը, ներառյալ հարկերը, հազ. դրամ
1	Բրենդավորման ծառայություններ	ծառայություն	1	2,800,000.0	2,800.0
2	Գովազդային և տպագրական ծառայություններ	ծառայություն	1	96,690,000.0	96,690.0
3	Սոցիալական ցանցերում առաջխաղացման ծառայություններ	ծառայություն	1	5,400,000.0	5,400.0
4	Բացման հանդիսավոր արարողության կազմակերպում	ծառայություն	1	203,670,000.0	203,670.0
5	Մրցաշարի շրջանակներում միջոցառումների կազմակերպման ծառայություններ	ծառայություն	1	148,600,000.0	148,600.0
6	Վիդեո և անիմացիոն նյութերի պատրաստում	ծառայություն	1	25,000,000.0	25,000.0
7	Մրցաշարին նվիրված երգի ստեղծում	ծառայություն	1	30,000,000.0	30,000.0
8	Պահնորդական ծառայություններ	ծառայություն	1	10,000,000.0	10,000.0
9	Կազմակերպչական այլ չնախատեսված ծախսեր*	ծառայություն	1	63,000,000.0	63,000.0
10	Կոնցեպտի մշակում, սցենարի ստեղծում և հսկողություն, միջոցառման ամբողջական վերահսկողություն				40,000.0
	ԸՆԴԱՄԵՆԸ				625,160.0
	ԱԱՀ**				125,032.0
	ԸՆԴԱՄԵՆԸ, ՆԵՐԱՌՅԱԼ ԱԱՀ				750,192.0

* Կազմակերպությունը իրավունք ունի նախահաշվի 9-րդ տողում նշված կազմակերպչական այլ չնախատեսված ծախսերը տեղափոխել այլ ծախսային տողեր՝ նախօրոք գրավոր համաձայնեցելով պետական մարմնի հետ

** ԱԱՀ-ի գծով լրացուցիչ հատկացումները որպես հարկային պարտավորություն ենթակա են վճարման Կատարողի կողմից որպես ԱԱՀ, հակառակ դեպքում ենթակա են վերադարձման Պետական Մարմնին:

ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ	ԿԱՌՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ
ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն	«Ֆակտորի Փրոդաքշն» ՍՊԸ
Հասցե՝ ք. Երևան, Կառավարական 2-րդ շենք	ք. Երևան, Սասնա Ծռեր 2/198
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն	Բանկ՝ « Էվոկաբանկ» ՓԲԸ
Հ/Հ 900011039865	Հ/Հ՝ 1660004718200100
ՀՎՀՀ՝ 02698732	ՀՎՀՀ՝ 00167818
Գլխավոր քարտուղար՝	Էլ. փոստ՝ rudik.tergalstyan@factory.am
	Տնօրեն՝
_____ Գ. Սաֆարյան	_____ Ռ. Տեր-Գալստյան
Կ. Տ.	Կ. Տ.

Հավելված N3
2022 թ. ապրիլի 20-ին
կնքված N ՍՊԸԵ79-2022 պայմանագրի

«Ֆակտորի Փրոդաքշն» ՍՊԸ-ի 2022թ. ՀՀ պետական բյուջեից ֆինանսավորման չափի վճարման ժամանակացույց (աճողական)

Ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի, ծառայության անվանումը	Ընդամենը տարեկան (հազար դրամ)	Նախատեսվում է ֆինանսավորել ՀՀ 2022 թվականի պետական բյուջեից (հազար դրամ), ընդ որում՝											
		1 եռամսյակ			6 ամիս			9 ամիս			տարի		
		հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր
1	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15
Ծրագիր	750,192.0	0,0	0,0	0,0	300,076.0	600,153.0	750,192.0	750,192.0	750,192.0	750,192.0	750,192.0	750,192.0	750,192.0
Ընդամենը	750,192.0	0,0	0,0	0,0	300,076.0	600,153.0	750,192.0	750,192.0	750,192.0	750,192.0	750,192.0	750,192.0	750,192.0

ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն
Հասցե. ք. Երևան, Կառավարական 2-րդ շենք
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011039865
ՀՎՀՀ՝ 02698732
Գլխավոր քարտուղար՝
_____ Գ. Սաֆարյան
Կ. Տ.

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

«Ֆակտորի Փրոդաքշն» ՍՊԸ
ք. Երևան, Սասնա Ծռեր 2/198
Բանկ՝ « Էվոկաբանկ» ՓԲԸ
Հ/Հ՝ 1660004718200100
ՀՎՀՀ՝ 00167818
Էլ. փոստ՝ rudik.tergalstyan@factory.am
Տնօրեն՝
_____ Ռ. Տեր-Գալստյան
Կ. Տ.